

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԸ



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր Իրինա Դրամբյանը ծնվել է 1939 թ. օգոստոսի 24-ին, Երեվանում, անվանի արվեստաբան, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր-տնօրեն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի առաջին վարիչ Ռուբեն Դրամբյանի ընտանիքում:

1957 թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ Ի. Դրամբյանն ընդունվում է Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտ, որն ավարտում է 1963-ին «կերպարվեստի պատմություն և տեսություն» մասնագիտությամբ, նշանակում ստանում ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող և զբաղվում հայ միջնադարյան կերպարվեստի պատմության հարցերով: 1965-1968 թթ. Ի. Դրամբյանն ուսումնառությունը շարունակում է

Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտուրայում՝ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, արվեստի ականավոր պատմաբան, բյուզանդական, հինուսական և արևմտաեվրոպական արվեստների XX դ. խոշորագույն մասնագետներից մեկի՝ արտասահմանյան 7 ակադեմիաների պատվավոր անդամ Վիկտոր Լագարնի դեկավարությամբ: Ավարտելով ասպիրանտուրան՝ Ի. Դրամբյանը 1968 թ. վերադառնում է Երևան, և այդ թվականից բացառապես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ են կապվում արվեստաբանի գիտաստեղծագործական կյանքի ավելի քան չորս տասնամյակները:

1970 թ. Մոսկվայի պետական համալսարանում Ի. Դրամբյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցու արվեստը» թեմայով և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1981 թ. նա ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատողի պաշտոնում, 1999 թ. պաշտպանում դոկտորական ատենախոսություն՝ «Թորոս Ռոսլինը և ծաղկման շրջանի կիլիկյան գրքարվեստը» թեմայով և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: 2002-ից Ի. Դրամբյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: Տարիներ շարունակ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ է: Նա նաև Հայաստանի նկարիչների միության անդամ է (1972-ից), 2003-ին նրա անունը ընդգրկվել է "International Who's Who of Professional and Business Women" հանրագիտարանում (հրատ. ԱՄՆ-ում): Լայն ու ընդգրկուն են արվեստաբանական կրթության փայլուն դպրոց անցած հետազոտողի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նրան հավասարապես զբաղեցրել են թե՛ հայ միջնադարյան կերպարվեստի (ի մասնավորի՝ XII- XIII դդ. կիլիկյան) և թե՛ մոնումենտալ գեղանկարչության (հիմնականում՝ XIII դ.), թե՛ ուշ միջնադարյան և XIX դ. – XX դարասկզբի հայկական կի-

րառական արվեստի ուսումնասիրման խնդիրները: Արվեստաբանն անդրադարձել է արդի հայ նկարիչների ստեղծագործություններին ևս:

1971 թ. Մոսկվայում հրատարակվում է հայկական մանրանկարչության մասին Բ.Դրամբյանի անդրանիկ աշխատությունը<sup>1</sup>, այնուհետև 50.000 տպաքանակով, «Աշխարհի քաղաքներն ու թանգարանները» մատենաշարով լույս է տեսնում «Մատենադարանի գեղարվեստական գանձերը» գիրքը (Օ., 1976) էապես հարստացնելով հին ձեռագրերի այդ եզակի պահոցի մասին գիտական ու հանրամատչելի բազմաթիվ գրքերի ու հոդվածների ծավալուն գրականությունը<sup>2</sup>: Գրքում Մաշտոցի անվան Մատենադարանի առավել նշանակալի ձեռագրերի հիման վրա ներկայացվում է հայ միջնադարյան մանրանկարչության զարգացման գործընթացը հրնթացս ծանոթացնելով դեկորատիվ կիրառական ստեղծագործության նմուշներին: Ընթերցողի առջև բացահայտվում է հայ գրքարվեստի գեղարվեստական ուղղությունների և ոճական տարբերակների ողջ հարստությունը՝ զարգացման 13 դարերի ընթացքում: Հեղինակները՝ Բ. Դրամբյանն ու արվեստագիտության դոկտոր, երջանակահիշատակ Էմմա Կորիմագյանը, «ընթերցողին առաջարկում են հին ձեռագրերի ոչ թե գրական-պատմական, այլ «գեղարվեստական ընթերցում»<sup>3</sup>:

Օանրակշիռ է Բ. Դրամբյանի վաստակը մոնումենտալ գեղանկարչության ուսումնասիրության գործում: Շուրջ 20 տարվա ընթացքում՝ 1970-ականից մինչև 1980-ականի վերջերը, Բ. Դրամբյանը Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող Նիկոլայ Քոթանջյանի հետ հետևողականորեն ուսումնասիրել է Խորհրդային Հայաստանի տարածքում գտնվող վաղ և զարգացած միջնադարի հայկական եկեղեցիների խորանները, հետազոտել դրանցում պահպանված որմնանկարները (հաճախ՝ դրանց մնացորդները), հավաքել հսկայական ֆոտոնյութ, որի արժեքն աճում է այդ գիտարշավների նշագրված որմնանկարների հատվածների զգալի մասի կորուստյան պատճառով: «Քոբայրի որմնանկարները» (ռուս., Ե., 1979) հետազոտությունը նվիրված է միջնադարյան հայ մոնումենտալ գեղանկարչության նշանավոր հուշարձաններից մեկին՝ Ալավերդուց ոչ հեռու, Դեբեդի գեղատեսիլ կիրճում գտնվող Քոբայր վանքի որմնանկարներին, որոնք, իրավամբ, հայ արվեստի նշանակալի ստեղծագործություններից են, հայ միջնադարյան մոնումենտալ գեղանկարչության՝ մինչ մեր օրերը պահպանված սակավաթիվ հուշարձաններից: Դրանք, XIII դ. վերջին քառորդում ստեղծված և ժամանակի ընթացքում զգալիորեն վնասված, այդուհանդերձ, Ախթալայի որմնանկարների հետ մեկտեղ, Խորհրդային Հայաստանի տարածքում միջնադարյան որմնանկարչության լավագույնս պահպանված նմուշներն են: Մասնագետներին սակավ հայտնի, իսկ արվեստասերներին լիովին անհայտ այդ հուշարձանը Բ. Դրամբյանի ջանքերով, փաստորեն, հրատարակվեց առաջին անգամ, ինչը խիստ հրատապ էր ու արդիական: Ինչպես նկատում է Պարույր Մուրադյանը, 88888Եթե Քոբայրի որմնանկարների ուսումնասիրությունը դարձյալ ուշանար, ապա անկարելի պիտի դառնար ավանդատան պահպանված պատառիկները ճանաչելու հնարավորությունը<sup>4</sup>: Թեև Քոբայրի պատերին և որմնանկարներին առկա վրացերեն մակագրությունները որոշ հետազոտողների առիթ են տվել որմ-

<sup>1</sup> Драмбян И., *Армянская миниатюра*, М., 1971.

<sup>2</sup> Տե՛ս և Миловский А., *Редкая коллекция (Советская культура, 23.IX.1977)*.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Մուրադյան Պ., *Քոբայրի որմնանկարները (Սովետական Հայաստան, 12.IX.1979)*:

նանկարները վերագրելու վրաց արվեստին, սակայն «Քոբայրի պատմությունը, արտացոլված միջնադարյան պատմիչների տեղեկություններում և վանքի պատերի արձանագրություններում, դավանաբանական կողմից գատ, վկայում է հայ միջավայրի հետ նրա մշտական կապվածության մասին»<sup>5</sup>: Արվեստաբանը հիմնավորում է այն, որ «Ռմնանկարների ոճական առանձնահատկությունների վերլուծությունը վկայում է, որ նրանցում գերիշխում է տեղական ավանդույթը, որն արևելաքրիստոնեական միտում ունի. դրա օգտին են խոսում հարթապատկերայնության հակումը, ֆիգուրների շարժման պայմանականությունը, ոճի գրաֆիկականությունը, որը եզրագիծը ակտիվորեն օգտագործում է որպես գեղարվեստական արտահայտիչ միջոց, և, ի վերջո, պարզորոշ արևելյան տիպաժը»<sup>6</sup>: Ռմնանկարները ներկայացված են 35 գունավոր և 17 սև-սպիտակ վերատպություններով<sup>7</sup>: Ձուտ ակադեմիական նշանակությունից բացի, աշխատությունն ունի գործնական ուղղվածություն. «Ուզում եմ հավատալ,- գրում է հեղինակը,- որ Քոբայրի ռմնանկարների հրատարակումը կիրավիրի հուշարձանների պահպանության կոմիտեի ուշադրությունը և կարագացնի XIII դարի գեղանկարչության այդ հրաշալի հուշարձանի փրկության համար միջոցառումների ձեռնարկումը»<sup>8</sup>:

1984 թ. Լենինգրադի «Ավրորա» հրատարակչությունը անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով հրատարակում է «XIII-XIV դարերի հայկական մանրանկարչությունը. Մատենադարանի հավաքածուից» ավրամը (հեղինակներ՝ Էմմա Կորխմազյան, Իրինա Դրամբյան, Հրավարդ Հակոբյան), որը ներառում է 61 ձեռագրից 160 վերատպություն. դրանցից ավելի քան 50-ը ներկայացվում են առաջին անգամ: Այլումը նվիրված է հայ մանրանկարչության այն հուշարձաններին, որոնք ստեղծվել են «XIII-XIV դարերում, երբ այդ արվեստը Հայաստանում ապրում էր իր զարգացման բուռն վերելքը, երբ բյուրեղանում և ամբողջական տեսք էր ստանում նրա ազգային նկարագիրը: XIII դ. սկզբներից հայ մանրանկարչության մեջ նկատվում է առանձին դպրոցների և ուղղությունների գատորոշման հետաքրքրական երևույթը»<sup>9</sup>: «Կիլիկյան Հայաստան» գլուխը գրել է Ի. Դրամբյանը: «Հեղինակը հակիրճ և հստակ ցույց է տալիս այն գործոնները, որոնք կարող էին նպաստել կիլիկյան մանրանկարչության զարգացմանը... Դրամբյանի արվեստագիտական նուրբ ճաշակը հատկապես դրսևորվում է նշանավոր ձեռագրերի գեղարվեստական բնութագրումների ժամանակ, որոնք մեծ հնարավորություն են տալիս ընկալելու կիլիկյան արվեստի ոճական կերպարայնությունների պատմությունը»<sup>10</sup>: Ի. Դրամբյանն է հեղինակել նաև 2006 թ. Երևանում ֆրանսերենով հրատարակված՝ հայկական մանրանկարչությանը նվիրված ավրամի

<sup>5</sup> Драмбян И., *Фрески Кобайра, Е., 1979, с. 18.*

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>7</sup> Հընթացս Գրքի միջազգային մոսկովյան երկրորդ ցուցահանդես-տոնավաճառի (1979 թ.)՝ արտասահմանյան 20 երկրներ, այդ թվում՝ Մեքսիկան, Լիբանանը, Հարավսլավիան, Չեխոսլովակիան, Հունգարիան և Անգլիան, ի շարս Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» և Ն. Քուչակի «Հարյուր ու մեկ հայրեն» գրքերի, ձեռք են բերում իրենց երկրներում նաև Ի. Դրամբյանի «Քոբայրի ռմնանկարները» գիրքը հրատարակելու իրավունքը:

<sup>8</sup> Драмбян И., *Шедевр средневековья (Գրքերի աշխարհ, 15.VI.1979).*

<sup>9</sup> *Armenian Miniatures of the 13th and 14th Centuries from the Matenadaran Collection, Leningrad, 1984, Aurora Art Publishers, p. 34.*

<sup>10</sup> Ղազարյան Վ., *Արժեքավոր հրատարակություն (Սովետական արվեստ, 1986, N 1, էջ 58):*

«Կիլիկյան մանրանկարչություն» բաժինը<sup>11</sup>:

Միջնադարագետ արվեստաբանի մեծագույն ծառայություններից է XIII դ. Կիլիկիայի հայկական մանրանկարչության ու պատմամշակութային միջավայրի ուսումնասիրությունը, որի արդյունքն ամփոփված է երկու հիմնարար մենագրություններում՝ նվիրված Թորոս Ռոսլինի ստեղծագործությանը և հետոսլինյան գրքարվեստի գլուխգործոցներից Հեթում Բ արքայի Ճաշոցին: Հայ միջնադարյան խոշորագույն արվեստագետներից մեկի՝ հայ մեծ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի լուսավոր ու հրաշալի արվեստի վերաբերյալ անդրանիկ մենագրության մեջ («ՉՏԲՏր ՀՏրսԲվ», ժ., 2000), որը կիլիկյան գրքարվեստի և, ի մասնավորի, Ռոսլինի ստեղծագործության ուսումնասիրության Ի. Դրամբյանի շուրջ 30-ամյա աշխատանքի հանրագումարն է, հեղինակը ներկայացնում է Ռոսլինի կենսագրական տեղեկությունները, բացահայտում նրա մանրանկարների պատկերագրական առանձնահատկությունները, վերլուծում վարպետի գեղարվեստական լեզվի տարբեր տեսանկյունները, բնութագրում մարդու հայեցակետը նկարչի ստեղծագործության մեջ, բնորոշում XIII դ. արվեստի պատմության մեջ Թ. Ռոսլինի տեղն ու դերը:

2004 թ. լույս է տեսնում «Հեթում Բ արքայի Ճաշոցը (1286 թ. հայկական նկարագրող մատյանը)» մենագրությունը: Կիլիկյան Հայաստանի Հեթում Բ արքայի 1286 թ. Ճաշոցը՝ մեզ հասած միակ ճոխ պատկերագրողված հայկական Ճաշոցը, միջնադարյան Հայաստանի գրքարվեստի գլուխգործոցներից է և մեկը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ամենահայտնի ձեռագրերից: Հրատարակությունը հնարավորություն է ընձեռում ծանոթանալ միջնադարյան պատկերագրող այդ անգուզական ձեռագիր մատյանին: Ընթերցողը պատկերացում է կազմում ինչպես ձեռագրի ստեղծման ժամանակի և Կիլիկյան Հայաստանի, այնպես էլ պատվիրատուի և ձեռագիրը նկարագրող մանրանկարիչների մասին: Գրքում տեղեկություն է տրվում հայկական Ճաշոցների յուրահատկության և պատկերագրման սկզբունքների մասին, բնութագրվում են մանրանկարների գեղարվեստական առանձնահատկությունները և որոշվում՝ ձեռագրակենտրոնը: Գրքի հավելվածը՝ մանրանկարների ծանոթագրությունները և տոնացուցային աղյուսակը, ընդգրկում են ձեռագիրը նկարագրող ֆիգուրատիվ մանրանկարների լիակատար ցանկը, ծանոթացնում են դրանց պուժեներին և որոշում նրանց հաջորդականությունը՝ ըստ տոների ժամերգական կարգի:

2008 թ. լույս է տեսնում միջնադարյան հայ գրքարվեստի հարուստ պատմության ամենավառ ու ինքնատիպ էջերից մեկի՝ միջնադարյան վերջին ակնավոր հայ մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցու (ապրել և ստեղծագործել է XVI դարավերջին և XVII դարասկզբին) արվեստին նվիրված Ի. Դրամբյանի ուսումնասիրությունը: 88888Եզակի է այդ վարպետի ֆիգուրը,- գրում է հեղինակը,- ապրելով XVI և XVII դարերի սահմանագլխին, երբ արդեն հետևում էին մնացել հայկական մանրանկարչության լավագույն նվաճումները (նրա գեղարվեստական մակարդակի անկումը սկիզբ առավ XV դարից), երբ արդեն ավելի ու ավելի լայնորեն էր տարածվում գրատպությունը (այդ թվում՝ նաև հայկական), որը XVII դարավերջին կասեցրեց ձեռագիր գրքի (դրա հետ մեկտեղ նաև մանրանկարչության) զարգացումը, իր բացառիկ օժտվածության և վառ անհատականության շնորհիվ Հակոբ Ջուղայեցին հայ գրքարվեստը վերջին անգամ բարձրացրեց այն բարձր մակարդակին, որն ընդհանուր առմամբ բնորոշ էր վաղ և ուշ

<sup>11</sup> *Sté u La miniature arménienne. (Collection du Maténadaran), Erevan, 2006, p. 22-39.*

միջնադարի դարաշրջանների նրա նմուշներին»<sup>12</sup>: Ի. Դրամբյանը, հենվելով Ջուղայեցու յոթ ձեռագրերի վրա (դրանցից չորսը Մատենադարանի հավաքածուում հայտնաբերել է հեղինակը), քննության է առնում վարպետի մանրանկարների գեղարվեստական առանձնահատկությունները և պատկերագրությունը, բնորոշում Հակոբ Ջուղայեցու տեղն ու դերը հայ արվեստի պատմության մեջ: Հավելվածում բերված է նկարչի ծաղկած ձեռագրերի ցուցակը:

Բազմավաստակ հայագետն իր ծանրակշիռ խոսքն է ասել նաև XIX- XX դդ. հայ դեկորատիվ-կիրառական արվեստի ուսումնասիրության բնագավառում: Եվ պատահական չէ, որ 1981-ին Ի. Դրամբյանն արժանացել է ԽՍՀՄ նկարիչների միության 1-ին կարգի դիպլոմի՝ ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի կերպարվեստի տեսության և պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ լույս տեսած «История искусств народов СССР» գիտահետազոտական բազմահատորյակի ստեղծմանը մասնակցելու համար, որի IV, V, VI հատորներում համապատասխանաբար ընդգրկված են XVII-րդ դարավերջի և XVIII դարի<sup>13</sup>, XIX դարի առաջին կեսի<sup>14</sup> և XIX դ. երկրորդ կեսի ու XX դարասկզբի<sup>15</sup> հայկական դեկորատիվ-կիրառական արվեստին նվիրված բաժինները: Ի. Դրամբյանի գիտական խմբագրությամբ լույս են տեսել մի շարք գրքեր: Նրա ջանքերով, Հակոբ Հովնաթանյանի ծննդյան 200-ամյա հոբելյանի կապակցությամբ լույս տեսավ Ռուբեն Դրամբյանի արժեքավոր մենագրությունն ականավոր հայ նկարչի մասին<sup>16</sup>: Ուսումնասիրություն, որի առաջին տարբերակը Ռ. Դրամբյանն ավարտել էր արդեն իսկ 1930-ականի վերջին և որը մշակեց իր ողջ կյանքի ընթացքում: Ի. Դրամբյանը հեղինակ է Հայաստանում և արտերկրում հրատարակված բազմաթիվ գիտական և հանրագիտարանային հոդվածների: Ձեկուցումներով հանդես է եկել հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովներում՝ Իտալիայում և Երևանում, ինչպես նաև Հունաստանում, Ռուսաստանում՝ Մոսկվայում և Լենինգրադում: Այսօր էլ հայ կերպարվեստագիտության առաջատարներից մեկը՝ Ի. Դրամբյանը, շարունակում է արարել նա կարգավորում է Ռուբեն Դրամբյանի արխիվը, հրատարակության պատրաստում նրա հուշագրությունն ու նամականին: Բացի այդ՝ Նիկոլայ Քոթանջյանի հետ համատեղ գրում է հայկական որմնանկարչության պատմության բազմահատորյակ:

**ԱՍՍՏՐՅԱՆ Ա. Գ.**

Արվեստագիտության դոկտոր

<sup>12</sup> **Драмбян И.**, *Акоп Джугаеци, Е., 2008, с. 9.*

<sup>13</sup> **Драмбян И.**, *Декоративно-прикладное искусство Армении конца XVII-XVIII вв. (История искусства народов СССР, т. 4, М., 1976, с. 394-398).*

<sup>14</sup> **Драмбян И.**, *Декоративно-прикладное искусство Армении первой половины XIX века (նույն տեղում, տ. 5, М., 1979, с. 333-338).*

<sup>15</sup> **Драмбян И.**, *Декоративно-прикладное искусство Армении второй половины XIX-начала XX вв. (նույն տեղում, տ. 6, М., 1981, с. 372-373).*

<sup>16</sup> **Драмбян Р.**, *Акоп Овнатянян, Е., 2006.*